ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Զեկուցող՝ ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ
Հրանտ Նազարյան

Կոնֆերանսի հարգարժան մասնակիցներ, կոլեգաներ, թույլ տվեք նախ ՀՀ սահ-մանադրական դատարանի անունից խորին շնորհակալություն հայտնել կոնֆերանսի կազմակերպիչներին, վրացական կողմին, այստեղ հյուրընկալվելու եւ դատական իշ-խանությանն առընչվող հրատապ խնդիրների կոլեգիալ քննարկումներին մասնակցե-լու հնարավորություն ունենալու համար: Թույլ տվեք կարճ ներկայացնեմ քննարկվող հարցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության փորձը:

Ընդհանուր իրավասության դատարանների եւ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի (դատարանի) ինստիտուցիոնալ հարաբերությունների խնդիրը, իհարկե, հրատապ եւ կարեւոր է հատկապես երիտասարդ ժողովրդավարության պետություններում, որպիսին է նաեւ Հայաստանը, որտեղ անձի իրավունքների եւ ազատությունների պաշտպանության եւ հատկապես՝ դրանց դատական պաշտպանության հիմնախնդիրն օրակարգային է, պահանջում է առավել հստակ ինստիտուցիոնալ մոտեցումներ ներպետական հարաբերություններում եւ, միաժամանակ, չի հանդուրժում ոչ լիարժեք, ոչ համակարգային կամ՝ ոչ իրավական լուծումներ:

Եվրոպական պետաիրավական պրակտիկան վաղուց է ապացուցել ընդհանուր եւ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների փոխգործակցության անհրաժեշտությունը՝ ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ՝ սահմանադրական դատարանների, եւ վերջապես՝ ողջ դատական իշխանության առջեւ դրված խնդիրների արդյունավետ լուծման գործում: Այդ հիմնախնդրի տեսական եւ գործնական բազմաթիվ հարցեր հանգամանալի քննության առարկա դարձան Սահմանադրական դատարանների 12-րդ համաեվրոպական կոնֆերանսում, որն ինչպես հայտնի է կայացավ 2002 թվականի մայիսին:

Պետք է նշեմ, որ ընդհանուր իրավասության դատարան - սահմանադրական դատարան գործակցական կապի խնդրում խիստ տկար, կամ՝ ավելի ճշգրիտ՝ բացակայում է համապատասխան փորձը Հայաստանի Հանրապետությունում՝ սահմանադրաիրավական եւ օրենսդրական ոչ լիարժեք լուծումների հետեւանքով:

ՀՀ սահմանադրական դատարանը, որպես սահմանադրական մարմին, ձեւա-վորվել է 1996 թվականի փետրվարին՝ Հայաստանի նորանկախ պետության Սահմանադրության ընդունումից հետո: Այն, որպես սահմանադրական

արդարադատություն իրականացնող մարմին նորույթ էր ՀՀ պետաիրավական պրակտիկայում: Ըստ իր սահմանադրական լիազորությունների բովանդակության, ընդհանուր առմամբ, կոչված է պետաիշխանական համակարգում կատարելու նույնպիսի ինստիտուցիոնալ դեր, ինչպիսին՝ եվրոպական եւ պետաիրավական այլ, առավել զարգացած համակարգերում, սակայն որոշ վերապահումներով, որոնք շոշափելի բացասական ազդեցություն են ունենում թե ՀՀ արդարադատական ողջ համակարգի գործունեության եւ թե, հատկապես, անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության արդյունավետության վրա:

Կոնֆերանսում քննարկվող խնդրի տեսանկյունից մոտենալով ցանկանում եմ, մասնավորապես, շեշտադրել 2 առավել հրատապ հիմնախնդիրներ, որոնք ՀՀ-ում պահանջում են նախ՝ սահմանադրական, հետո նաեւ՝ օրենսդրական համարժեք լուծումներ: Առաջին, անհատը ՀՀ-ում զրկված է սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունից (բացառությամբ՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով, որոնց դեպքում դիմող կողմի կարգավիճակում են ՀՀ Նախագահի եւ պատգամավորության թեկնածուները), չնայած ՀՀ Սահմանադրության 38 հոդվածին համապատասխան, ձեւականորեն նրան է պատկանում Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իր իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունքը: Երկրորդ, ընդհանուր իրավասության դատարանը, նույնպես, զրկված է իր իրավասության ենթակա գործերով ծագած սահմանադրականության խնդրով սահմանադրական դատարան դիմելու անմիջական հնարավորությունից: Այսինքն, ընդհանուր իրավասության դատարանում գործի քննության ընթացքում ծագած սահմանադրականության հարցը չի կարող սահմանադրական դատարում քննության առարկա լինել՝ կամ շահագրգիռ անձի եւ կամ՝ ընդհանուր իրավասության դատարանի անմիջական նախաձեռնությամբ, այնպես, ինչպես դա ընդունված է միջազգային սահմանադրական արդարադատական պրակտիկայում: Հայաստանի Հանրապետության պարագայում գտնվել է բավական ուրույն եւ ըստ իս՝ անարդյունավետ լուծում:

ՀՀ գործող Սահմանադրության 101 հոդվածի համաձայն սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն Հանրապետության Նախագահը, պատգամավորների առնվազն մեկ երրորդը, Հանրապետության Նախագահի եւ պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքներով եւ կառավարությունը: «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի համաձայն դատարանների նախագահների խորհուրդը, որպես դատական իշխանության վարչակառավարչական մարմին, իրավասու է օրենքով նախատեսված դեպքում դիմելու Հանրապետության Նախագահին՝ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության որոշումների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ սահմանադրական դատարան դիմելու միջնորդությամբ: Իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105, 106 եւ 107 հոդվածներում սահմանված կարգով

ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր է քննվող գործի վարույթը կասեցնել, երբ առկա է սահմանադրականության հարց, դիմել ՀՀ դատարանների նախագահների խորհրդին՝ ՀՀ Նախագահի դիմումով սահմանադրական դատարանում այդ հարցի լուծման խնդրանքով: Այսինքն, ընդհանուր իրավասության դատարան ¬ սահմանադրական դատարան ինստիտուցիոնալ հնարավոր կապը միջնորդավորված է Հայաստանում, եւ այն էլ՝ երկաստիճան համակարգով (դատարանների նախագահների խորհուրդ, ՀՀ Նախագահ), որը գործնականում, գրեթե, անիրագործելի է եւ անարդյունավետ, պայմանավորված սուբյեկտիվ կամահայտ հնարավոր դրսեւորումներով, քանի որ ընդհանուր իրավասության դատարանում ծագած սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմելու խնդրանքը (դիմումը) կարող է մերժվել կամ դատարանների նախագահների խորհրդի եւ կամ՝ Հանրապետության Նախագահի կողմից, քանի որ հիշյալ դեպքերում այդ սուբյեկտների գործողությունները, ըստ օրենքի ձեւակերպման, իմպերատիվ բնույթ չունեն: Ցավոք, օրենսդրությամբ նախատեսված, նույնիսկ այսպիսի ընթակարգի կիրառման փորձի բացակայությունը Հայաստանում հնարավորություն չի ընձեռում խնդրի վերաբերյալ արտահայտել գործնական մոտեցումներ:

Այսպիսով, ակնհայտ են ընդհանուր իրավասության դատարան ¬ սահմանադրական դատարան ինստիտուցիոնալ գործակցության բացակայության բացասական հետեւանքները՝ Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ արդարադատության իրականացման խնդրում: Դա պահանջում է, նախ սահմանադրական կոնկրետ լուծումներ, որպիսի փորձ ձեռնարկվեց 2003 թվականի մայիսին՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի շրջանակներում, որը սակայն հանրաքվեի արդյունքներով հավանության չարժանացավ մի շարք պատճառներով: Այդ նախագծում, մասնավորապես, նախատեսվել էր իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով անմիջականորեն սահմանադրական դատարան դիմելու ընդհանուր իրավասության դատարանների իրավունքը: Ակնկալվում է, որ սահմանադրական փոփոխությունները մոտ ապագայում դարձյալ կդրվեն հանրաքվեի, որը բխում է նաեւ Եվրոխորհրդի առջեւ ՀՀ ստանձնած պարտավորություններից:

Այն հարցը, թե հնարավոր է արդյոք ընդհանուր իրավասության դատարանի կայացրած այս կամ այն որոշման սահմանադրականության քննություն ՀՀ սահմանադրական դատարանում, միանշանակ լուծված է գործող Սահմանադրությամբ: Այդպիսի լիազորություն սահմանադրական դատարանը չունի: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատական ակտը վերաքննվում է ընդհանուր իրավասության վերաքննիչ, իսկ այնուհետ՝ ՀՀ վճռաբեկ դատարանում, եւ այն էլ՝ նյութական եւ ընթացակարգային օրենքին համապատասխանության խնդրով: Իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածին համապատասխան, սահմանադրական դատարանում քննվող գործին առնչվող

փաստական հանգամանքները, որպիսին կարող են լինել օրինական ուժի մեջ մտած ընդհանուր իրավասության դատական ակտերը, նույնիսկ քննության առարկա չեն կարող հանդիսանալ: Չնայած, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից եւ ղեկավարվելով իրավունքի ընդհանուր սկզբունքներով ու միջազգային իրավական պրակտիկայով, ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է գտել, որոշ դեպքերում, իրավական դիրքորոշում հայտնել հանրապետությունում ընդհանուր իրավասության դատական պրակտիկայի այս կամ այն բացասական, ոչ իրավական դրսեւորումների վերաբերյալ, մասնավորապես նախագահական ընտրական գործընթացների առնչությամբ (2003 թվականի մարտի 24-ի թիվ 408 որոշում):

Ընդհանուր իրավասության դատարանը ՀՀ-ում չի կարող կիրառել սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչված իրավական ակտը, քանի որ ՀՀ Սահմանադրության 102 հոդվածին համապատասխան, սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, վերանայման ենթակա չեն եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այդ որոշումները պարտադիր են կատարման իրավահարաբերության բոլոր սուբյեկտների կողմից: Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 6 հոդվածին համապատասխան, Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները եւ իրավական այլ ակտերը իրավաբանական ուժ չունեն: Խնդիրն այստեղ իր բավարար լուծումը չի ստացել իմ կողմից վերը մանրամասնված պատճառներով, երբ ընդհանուր իրավասության դատարանում գործի քննությամբ ենթադրվում է կիրառվող նորմատիվ ակտի սահմանադրականության հարց, որն իր լուծումը կարող է ստանալ միջնորդավորված ընթացակարգով:

Վերջում, եզրափակելով հաղորդումս, ցանկանում եմ նշել, որ նորանկախ պետությունների համար կարեւոր է ժողովրդավարական հաստատուն ավանդույթներ ունեցող եվրոպական զարգացած երկրների փորձն առավել ակտիվ կերպով հաշվի առնելը, խուսափելով սեփական սխալներն ու բացթողումներն անընդհատ շտկելու ուղղուց: Ուստի, կարծում եմ, արտահայտած կլինեմ ներկա գտնվող հարգարժան կոլեգաներիս կարծիքը նաեւ, եթե ընդգծեմ, որ քննարկվող խնդրի շուրջ սույն կոնֆերանսում ներկայացված միջազգային փորձը մեծապես կարեւոր եւ օգտակար կլինեն ներպետական դատական իշխանության անկախության եւ արդարադատության արդյունավետության, ժողովրդավարության հետագա զարգացման առումներով: